ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Եկամտային հարկի մասին» 2013 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-86-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 5-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամտի չափով, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:»:

Հոդված 2. ««Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2018 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-85-Ն օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «հունվարի 1-ից» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասի» բառերը,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս.

«4. Օրենքի 9.1-ին հոդվածի 1.1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:»:

Հոդված 3.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հուլիսի 1-ից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի դրույթները տարածվում են այն արժեթղթերի (արժեթղթերի դասերի) վրա, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**